ԱՆՏԻՊ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՎԱՐԻԱՆՏՆԵՐ

Հ. ԹԼԿՈՒՐԱՆՑԻ

ՏԱՂ ԳԱՐՆԱՆ*

Աստուած անսկիզբն և անսահման,
Անտանելի և անթարգման
Զգարունն արար հանց պատուական,
Նման դրախտին եդեմական։

Ծառք և դրախտք կանաչեցան,
Մրգապայծառ զարդարեցան,
Աղբերականք յորդորեցան,
Ծովք ու գետերք ի գնացք եղան։

Դաշտունք ամէն ծաղկօք լցան,
Որի հոտոյն մարդիկ ցնծան,
Սիրոյարնեին կու ճոխանան,
Ի վերա Թեւին հային 'ւ երթան։

Կոզեռ տղայքն կու խայտան,
Զխաղլու անդանքն ի շուրջ կուզան,
Զորքոտանիք որ՝ արգելան
Ի գոմերուն զարկին ւ՚ ելան։

Աղջկունք զվարսըն կուզեղեն,
Ճեմեն, քայլեն և հետ խաղան,
Ծիծառունք եկին և բուն դրին,
Սաղմոս ասեն զատունն ի լման։

Ցովանայհաւն ու բսեղնայն,
Ղումրին ունին յոյժ քաղցր ձայն,
Գիտեն քարոզ, զանձ և տաղեր,
Մեղեդի և շատ շարական։

Արագիլն ու սագն ու բատն
Ու շինարօրն ուրախանան,
Բլբուլքն եկեն փափակելով,
Ի վարդենիսըն Թավլեցան։

Եռաց երկիր և կակղացաւ,
Բիւր ի բուրուց ծաղիկ բուսաւ,
Շուշան, կանանչ մուրտն և մորչն
Եւ մանուշակն ի մի դարձան։

Գնացին վարդին երկիր պագին,
Զտեղան ունէին բերենացն ալամ,
Նայ նարգըզի հոտըն բուրեաց,
Խաժխաժըն Թագ պաճուճեցաւ*։

Նաւնոֆարն՝ ի ջրէն ի դուրս,
Դեղին կարմիր երևեցաւ,
Համասփիւռն՝ ի մէջ ծաղկանց,
Որ մայր ասի իմաստութեան։

Եւ բժշկէ չարուկ բորոտն
Եւ երևի յօր Համբարծման,
Ըզգայականք և բուսականք
Եւ ամենայն որդիկ մարդկան,

Ի մի բերան ամենեքեան,
Աւրհնեն անեղ բանն էական։
Կակղացան ծառայ սատանքն,
Մէկ հետ մէկի միրգն հասան։

ԹուԹն յառաջեաց քան զհալւէն,
Կեռասն յաղեղն այլ յերևման,
Մըշմիշն ի ծառն ելև դեղին,
'Ի այս խնձորնիդ կարմրացան։

Զտանձն ի մրգունքն խառեցին,
Բայց երբ միաճի կեր անսասան,
Ընգուզ ունօպն ու կասատանայն
Նուշն ու ֆնդուղն քաղցրացան։

Նուռն էլ երաց հազար ակռայն,
Ամբաւն ի ծառն կախւեցաւ,
Սերկևիլն դեղնեցաւ,
Խոխն ի կաղէն Թուլցաւ ընկաւ։

Զնարինջ, զԹրինջ, զլիմոնըն [տես],
Որ զարդմորդու բարքն բանան,
Այս հեծելներ որ գնաց,
Դեռ զայ խաղողն զոմական։

* Ձեռագրում՝ անխորագիր։

* Այս և հաջորդ մի քանի տներում զգացվում է որոշ տողերի պակաս և տների վերակազմում։

Զի սայ հնան զմեզ ի դրախտէն,
Յորժամ եկեր բղնայ Ադամ.
Զփակեալ դուռըն դրախտին
Կրկին խաղողն եբաց մարդկան:

Ով արբէ զգայ սրբութեամբ,
Ոչ ճաշակէ զմահ յաւիտեան,
Նա ի յիս բընակեսցէ
Եւ ես ի նմա անզրաւական։

Հուսկ երեկ աւուրք աշնան,
Որ է անցումն ամէն սերման,
Դաշտ ի բուսոց դատարկանան,
Ծաղկունք անցնին 'ւ այլ չերեւան։

Ծառք ի պտղոյ դատարկանան,
Տերեւաթափ յոստոց եղան,
Հաւերն երամ կապէն ու լան,
Թէ այլ ով լինի գարնան արժան։

Թէ շատ ուտեն, թէ շատ խմեն,
Նայ ցանկանան աւուր գարնան,
Աշուն նման է ծերութեան,
Ծերք մեռանեն, անցնեն, գնան։

Պարտ է մեզ սպասել անանցն,
Որ յաւիտեան է անվախճան.
Ուր հանապազ օրն է գարնան,
Փառք ու պատիւ է անխափան:

Ով զերախտիքս զայս չիշէ
Եւ փառս տայ աստուածութեան,
Ես զիւահար ասեմ նմայ,
Կամ սատանայ անբարտաւան։

Ով զայս պարգեւս մեզ երետ,
Դարձեալ խնդրէ [այն թէ] փոխան,
Եղբայրասէր, աղօթասէր,
Սուրբ և խոնարհ և զղջական։

Թէ զայս պահես՝ նայ ասէն քեզ,
Անգինըն քեզ այլ սփական,
Եւ թէ անդարձ մնաս մեղօք
Մատնիս հրոյն գեհենական։

Խեւ Յովանէս Թուլկուրանցի,
Լցեալ մեղօք թշուառական,
Խնդրէ ի ձէնջ սրտի մտօք,
Հոգւոյն ասել տէր ողորմայն։

Ծանօթություն.—Այս տաղն ընդօրինակված է Հայկ. ՍՍՌ Ժողկոմսովետին կից Պետական Ձեռագրատան № 3498 ձեռագրում գտնվող վարիանտից։ Ձեռագիրը գրված է 1624 թվին:

Առաջին անգամ այդ տաղի մեկ թերի և աղավաղված վարիանտը տպագրվել է հայերեն անդրանիկ տպագիր տաղարանում, որտեղ այս վարիանտի ունեցած 26 տան փոխարեն կա միայն 18 տուն։ Պակասող 8 տների շարքում է նաև վերջին տունը. պարզ է, որ տաղից դուրս չէր կարելի իմանալ հեղինակի մասին. ուստի և տպագրել են որպես անհայտ հեղինակի գործ։ Ճիշտ է, նախորդում է Թլկուրանցու տաղաշարքը, բայց չի մտնում նրա մեջ։

Տպագրված այդ վարիանտի և անտիպ (մեր ձեռագրերում ու այժմ հայտնի՝ միակ մոտավորապես լրիվ թվացող) վարիանտի համեմատությունից պարզվեց, որ տպագիր վարիանտի հետևյալ տունը

«Տէր մեր Յիսուս Քրիստոս զգինին
Առաքելոցըն վերնատան,
Ասէ առէք արբէք սիրով,
Սա է արիւն իմ փրկական» —

ամբողջովին բացակայում է ձեռագիր վարիանտի մեջ։ Բացի այդ, տպագիր վարիանտում ոչ միայն տների հաջորդականությունն է խախտված, այլ և տողերի։ Եվ որովհետև միանգամայն դժվար է ծանոթությունների միջոցով տալ համեմատական տարբերությունների իսկական պատկերը, ուստի նպատակահարմար ենք գտնում տպագրել այդ 2 վարիանտն էլ միասին, մանավանդ, որ տպագիրն ավելի հին է, քան տաղի որևէ ձեռագիր օրինակը։ Որևէ ենք ասում, որովհետև Տաշեանի «Ցուցակ...»-ում կա հիշատակում այդ տաղի մասին*, սակայն առանց հեղինակի անվան նշումի։ Բացի այդ, Մատենադարանի № 1990 ձեռագրում կա հատված այդ տաղից, որը տպագիր օրինակի էլ ավելի համառոտն է։

Հով. Թլկուրանցու տաղերի շարքում՝

* Տես նաև Գատրճյանի հոդվածը «Բազմավէպ»-ում 1905 թ.

այս տաղը առանձնահատուկ նշանակություն ունի թե՛ որպես ծաղիկների, թռչունների, մրգերի գովասանության սաղմերը կրող տաղ (Ն. Շնորհալու հանելուկներից հետո), գրված Դավիթ Սալաձորցու և Կիրակոս (Թէ՝ Հովհաննես) եպիսկոպոսի համապատասխան տաղերից առաջ, և թե որպես մի այնպիսի տաղի, որտեղ բանաստեղծը պտուղները գովելիս, սկսած թթից (վաղ գարուն) և վերջացրած խաղողով (ուշ աշուն), վերջինիս մասին, որպես իրական կյանքի ու աշխարհիկ վայելքների պայծառ սիմվոլի, հակառակ կրոնի «հանդերձյալ կյանք»-ի մասին արած քարոզների, բացականչում է.

«...Զփակեալ դուռըն դրախտին
Կըկլին խաղողն եբաց մարդկան...»։

ՏԱՂ ԳԱՐՆԱՆՆ[1]

Աստուած[2] անըսկիզըն և անսահման,
Անստանելի և անթարքման,
Զգարուն արար հանց պատուական,
Նըման դրախտին եդեմական։

Ծառք[3] և դրախտք կանաչեցան[4],
Մրգապատուով[5] զարդարեցան,
Աղբերակունքըն[6] ոգորեցան[7],
Ծով և գետերք ի գնաց եղան[8]։

Զօրքտանիք առոգացան[9],
Ի զօվ երամ զարկլին 'ւ ելան,
Կոզեռ[10] տըղայքըն կու խաղան,
Խաղլով զտեղիքն շուրջ կուգան[11],

Սիրոյտէնըրին կու ճոխանան[12],
Ջերայ թեւին հային 'ւ երթան,
Աղչկունքն զվարըսըն[13] կու գեղեն,
Ճեմլին քայլին 'ւ ի հետ ցնծան[14]։

Հաւերտ ամէն ուրախացան,
և ի իւրեաց դադարքն ելան[15],
Ծիծառունքն եկին և բուն դըրին[16],
Սաղմոս ասցին զատուն ի լման[17]։

Ոհանահաւն ու ըուըղնան[18],
Ղումրին ունի յոյժ քաղցր ձայն,
Գիտեն քարոզ, զանձիր ու տաղ
Մեղեդիք ու շատ շարական։

Արագիլն ու սագն ու բաթն
և շընօրաւրն[19] ուրախացան,
Գլպուլնին փափաքանաւք[20]
Ի վարդենին թաւալեցան։

Շուշան կանաչ, մուրտ ու մարախն
Ու մանուշակըն մէկ գարձան,
Գնացին վարդին երկրպագին,
Ջեղտն[21] ունէին իւրեանց յալամ[22]։

Այն նարկիզին հոտըն բուրեաց,
Խաշխաշըն թաք պաճուճեցան,
Նաւնաւֆարնի ջըրէն ի դուրս
Դեղին կանաչ երեւեցան։

Համասփիւռն ի մէջ[23] ծաղկանց,
Որ մայր ասի իմաստութեան,
Եաւց երկիր և կակղեցան[24]
Բիւրք ի բիւրոց ծաղկունք բուսան։

Դաշտերտ[25] ամէն ծաղկօք լցան,
Որի հատուն[26] մարդիք ցնծան,
Կակղացան ծառոց ոստիքն[27],
Մէկ հետ մէկի մրգունք[28] հասան։

*) Թութն առաջեաց քան ըզհալեան,
Կեռասն աղեղ էր ի նման,
Միշմիշն ի ծառըն դեղնեցան,
Խընծորնի կարմրեցան։

*) Մըրգունքն ըզտանծըն խոտեցին,
Մինչ հասանէ կայր անսասան,
Ընկուզն յունապն ու կաստանան,
Նուշն ու ֆընդուխըն քաղցրացան։

*) Նուռն այլ եբաց ըհազար ակռան,
Ալըրուն ի ծառըն կախուեցան,
Սերկեւիլն դեղնեցաւ,
Դեղձն ի ծառին թուլցաւ անկաւ։

Նարինջ թուրինջ լեմոնըն գայ.
և զարդմորդուն բառքըն բանայ,
Թէ այդ հեծել տէր որ անցաւ,
Կուգայ խաղողըն գովական։

* Չի սայ եհան զմեզ 'ի դրախտէն,
Յորժամ եկեր ըղսա Ադամ,
Փակեցաւ դուռըն դրախտին
Կրկին խաղողն երաց մարդկան.

*   Տէր մեր Յիսուս Քրիստոս զգինին
Առաքելոցըն վերնատան,

Առէ՛ առէք, արբէք սիրով,
Սա է արիւն իմ փրկական։

* Ի սգայական և բուսական
և աստուծոյ որդիք մարդկան,
Ամենեքեան ի մի բերան
Աւրհնեն զանեղ բանն էական։

Ծանոթ.— Այս վարիանտն արտագրված է հայերեն անդրանիկ ապագիր տաղարանից։ № 1990 ձեռագրում գտնվող այդ տաղի մեկ ուրիշ վարիանտի հետ կատարված համեմատությունից գտանք հետևյալ տարբերությունները։

1 Տաղ զարման ազնիւ. 2 չէք Աստուած. 3 դաշտք. 4 կանաչացան. 5 մրգալպատուով. 6 Ցաղբերակունք. 7 յարդարեցան. 8 էզան. 9 ոռոգեցան. 10 գողեր. 11 խաղալով դաշտերն ի շուր կուգան. 12 Սիրոյ տէրերըն կու ճռճան. 13 զվարսեր. 14 Զէմին քայլեն և հետ երթան. 15 և իւրեանց զաղարքըն էկան. 16 եղան. 17 Սաղմոս սաեն տաւնն ի լման. 18 Անհայնահաւն է ըղըշնան. 19 չնոֆարն. 20 բուլբուլնին փափականօք. 21 զանդն. 22 ալամ. 23 Համասփիւռն ի մէնջ. 24 կակղացան. 25 դաշտերք. 26 հատոյն 27 ոստունք. 28 մրկունք։

* Այս նշանն ունեցող բոլոր տները բացակայում են ձեռագրի մեջ։ ± 24-րդ ծանոթությունը կրող տողից կարելի է եզրակացնել, որ բանաստեղծության տները խառնված և տեղափոխված են և ծաղիկների մասին եղած գովասանքները դասավորված են «բերքք ի բերոյ ծաղկունք բուսան» տողից առաջ։

Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ